



Ինչու՞ են թույլ իմունային համակարգ ունեցող անձանց անհրաժեշտ լրացուցիչ դեղաչափեր:

Միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ ունեցող մարդիկ (օրինակ՝ արյան քաղցկեղ ունեցող կամ քաղցկեղի որոշակի բուժում ստացող, օրգանների փոխպատվաստում կատարած և որոշակի աուտոիմունային հիվանդություններ ունեցող) հատկապես խոցելի են COVID-19-ի նկատմամբ: Նրանք ավելի մեծ հավանականությամբ կվարակվեն COVID-19-ով, քան Նորմալ իմունային համակարգ ունեցող մարդիկ: Եվ եթե նրանք վարակվեն, ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան և վիրուսը կփոխանցեն ուրիշներին:

Բացի այդ, թույլ իմունային համակարգ ունեցող որոշ մարդկանց մարմինը բավարար պաշտպանություն չի ստեղծում COVID-19-ի դեմ հիմնական պատվաստանյութերի շարքը ստանալիս: Այդ իսկ պատճառով, խորհուրդ է տրվում, որ նրանք ստանան պատվաստանյութի ավելի շատ դեղաչափեր, ինչպես նաև այդ դեղաչափերից մի քանիսը ստանան ավելի կարճ ժամանակային ընդմիջումներով:

Քանի՞ դեղաչափ պետք է ստանամ:

Եթե դուք 5 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի եք և ունեք միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ, դուք պետք է ստանաք COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափ՝ ձեր *հիմնական պատվաստանյութի շարքը* ավարտելու համար: Սա նշանակում է ընդհանուր՝

- Pfizer կամ Moderna պատվաստանյութերի 3 դեղաչափ - ԿԱՄ –
- J&J պատվաստանյութի 1 դեղաչափ և այնուհետև՝ Pfizer կամ Moderna պատվաստանյութի մեկ դեղաչափ:

Եթե դուք 12 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի և ունեք միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ, դուք պետք է ստանաք նաև առնվազն մեկ խթանիչ դեղաչափ:

- Եթե դուք ստացել եք Pfizer կամ Moderna պատվաստանյութը ձեր հիմնական շարքն ընդունելիս, դուք պետք է ստանաք խթանիչ դեղաչափ ձեր 3-րդ դեղաչափից առնվազն 3 ամիս անց՝ ստանալով ընդհանուր 4 դեղաչափ:
- Եթե դուք ստացել եք J&J պատվաստանյութը ձեր հիմնական շարքն ընդունելիս և Pfizer կամ Moderna պատվաստանյութը՝ որպես ձեր լրացուցիչ դեղաչափ, դուք պետք է ստանաք Pfizer կամ Moderna պատվաստանյութի խթանիչ դեղաչափը առնվազն 2 ամիս անց՝ ստանալով ընդհանուր երեք դեղաչափ:

Եթե դուք 12 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, դուք հնարավորություն ունեք ստանալ Pfizer կամ Moderna պատվաստանյութի [2-րդ խթանիչ](#) դեղաչափը ձեր առաջին խթանիչ դեղաչափից առնվազն 4 ամիս անց՝ ստանալով ընդհանուր 5 դեղաչափ: Դիտարկեք այս խթանիչ դեղաչափը հնարավորինս շուտ ստանալը:

Հարցրեք ձեր բժշկին ձեր լրացուցիչ և/կամ խթանիչ դեղաչափ(եր)ի ընդունման լավագույն ժամանակի մասին՝ հիմնվելով ձեր ընթացիկ բուժման ծրագրի վրա: Սա հատկապես կարևոր է, եթե պատրաստվում եք սկսել կամ վերսկսել իմունային համակարգը ճնշող դեղորայքով բուժումը:





Իմունային անբավարարություն ունեցող մարդկանց առաջարկվող հիմնական և խթանիչ դեղաչափերի վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս [COVID-19-ի դեմ Պատվաստման Ժամանակացույց VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) կայքէջում (Էջ 2):

Ի՞նչ լրացուցիչ քայլեր պետք է ձեռնարկեմ ինքս ինձ պաշտպանելու համար:

COVID-19-ի դեմ պատվաստվելուց բացի կարևոր է նաև ձեռնարկել լրացուցիչ քայլեր՝ ձեզ COVID-19-ից պաշտպանելու համար.

- **Խոսեք ձեր բժշկի հետ COVID-19-ը կանխարգելող դեղամիջոցների մասին:** Evusheld կոչվող դեղամիջոցն այժմ հասանելի է COVID-19 վարակի կանխարգելման համար այն մարդկանց մոտ, որոնց մարմինը չի կարող ստեղծել բավարար պաշտպանություն միայն պատվաստանյութից: Այն տրվում է մեկ այցելության ժամանակ նստատեղի հատվածում (buttocks) 2 առանձին ներարկումների տարբերակով: Այն կարող է ներարկվել 12 տարեկան և ավելի մեծ անձանց, որոնք կշռում են առնվազն 88 ֆունտ (pound): Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ph.lacounty.gov/covidmedicines կայքէջը:
- **Կրեք պաշտպանիչ դիմակ,** ինչպիսին է դեմքը լավ գրկող շնչառական դիմակը (respirator) (օրինակ՝ N95, KN95, KF94) կամ [կրկնակի դիմակ](https://ph.lacounty.gov/masks)՝ ավելի բարձր մակարդակի պաշտպանության համար: Հնարավորության դեպքում խուսափեք մարդաշատ փակ վայրերից կամ վատ օդափոխվող տարածքներից: Մանրամասների համար տե՛ս ph.lacounty.gov/reducerisk և ph.lacounty.gov/masks կայքէջերը:
- **Խրախուսեք ձեզ հետ ժամանակ անցկացնող մարդկանց, որպեսզի օգնեն պաշտպանել ձեզ:** Նրանք [պետք է ժամանակին ստանան](https://ph.lacounty.gov/vaccines) COVID-19-ի դեմ պահանջվող պատվաստանյութերը, ստանան [2-րդ խթանիչ](https://ph.lacounty.gov/2nd-dose) դեղաչափը, եթե իրավասու են, և ձեռնարկեն լրացուցիչ քայլեր՝ [սվագեզնելու COVID-19-ով վարակվելու](https://ph.lacounty.gov/covid-19-qa) և այն ձեզ փոխանցելու վտանգը:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



- Հաճախ Տրվող Հարցերի (ՀՏՀ) հետևյալ փաստաթուղթը կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19-ի դեմ Պատվաստման ՀՏՀ-ներ](https://www.vaccinate.lacounty.gov) կայքէջ:
- [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ Պատվաստման Ժամանակացույցը](https://www.vaccinate.lacounty.gov/covid-19-qa)՝ գրաֆիկական պատկերներով, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ են տրամադրում այն մասին, թե [ինչպես Պատվաստվել](https://www.vaccinate.lacounty.gov):
- Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստում Միջին Կամ Խիստ Իմունային Անբավարարություն Ունեցող Անձանց համար](https://www.cdc.gov/covid19/) կայքէջը:
- Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ:

